

Քաջարուցն՝ զոր ըսպանի  
մարտի մը մէջ ես այս ձեռամբ՝  
կախուած էր մի ծառի վըրայ  
մօտ բըրբակին գետակին.  
Ուզեցի զայն ծակել նետովն՝  
բոլոր ճարտանքս ի զոր եղան։  
— Շատ լաւ, ըստ շըքնաղն, և ես  
կուզեմ փորձել ճարտարութիւնն.  
Ես իմ ձեռներ ուստի երբեմ  
աղեղ լարել, աղեղ ձրգել,  
կու դուրսնայր հայր տեսնելով  
միշտ ի նպատակն հասած իմ նետ»։  
Կ'ըսէ, շափէ զմիջոցն անդէն  
և քընքուշ ձեռք լարեն զաղեղն.  
Ուզար վահանին  
ետև փաթայ ժածկրելու։  
Մահազոյժ սլաքըն շըքելով  
ընդ օք ըզսիրտըն կու ծակէ։  
« Գեղեցիկ աղեղ, կ'ըսէ,  
ձեռք սիրաւակ, շնորհակալ եմ։  
Ո՞վ այլ ոք բայց Դարդոյին  
դուստր արժանի էր ինձ մահ տալ.  
Փըսէ՛ զիս ի գետին,  
ցանկալիդ իմ, մօտ մըտերժիս  
— Ուզար, Ուզար, կու զոչէ  
արտասուալից, կոյսըն փափիկէ։  
Քաջարին Դարդոյ ինձ  
հաղորդեց իր կորութիւնն.  
Կըրնամ մեռնի ցընծութեամբ  
և վերջ տալ իմ տառապանաց»։  
Կըսէ կու մերկանայ  
պատենէն զսուրըն Ուզարայ  
կու մընէ և զողալով  
կ'ինայ գետին և կու մեռնի։  
կու նընջն նորս մէկաեղ  
մօտ բըրբակին գետակին։  
Ցարաւայն շարժուն ըստուբըն  
կու ծածկէ զիրեանց շիրիմն,  
Եւ այծեամն անտառասուն  
դայ ճարակել թաւ թաւ խստեր  
երբ արէն այրէ զերկինք,  
և լըռաթիւն տիրէ ՚նգնանուր։

Ա Ս Ս Ի Ա Ն  
Թ Ր Դ Յ Ն Հ Ա Յ Ա Կ Ա Խ Ա Ն



## Ա Կ Ն Ա Ր Կ Մ Ի

ԳԱՂԱՔԱԿԱՐՆ ԴԻՊԱՅ ՎԵՐԱՅ 1897 ՏԱՐԻՈՅ

—————

Յ Ա Ն Ո Ւ Ա Ր . — Խտալացի գերեաց առաջին խումբն կը հասնի յիտուիլա ներացցինի հետ, որ Մ'ենելիլի հետ խաղաղութեան դաշն հաստատեր էր : Դէրլիշը կը սպառնան արեւելիան կողմէն Երիտրէայի վրայ յարձակիլ : Վիճանոյ առջեւնին կ'առնու, եւ փոխել կու տայ անոնց զիտաւորութիւնը :

— Փոանկ-Ճունուզեան դաշնաղրամթիւնն կը կնքուի, որուն համար խտալիոյ եւ Գաղղիոյ մէջ եղած յարաբերութիւնք բարւորած կ'ըսուին :

— Լուծումն աւստրիական Խորհրդարանին : Կոմն Գոլուխովսկի կ'երթայ ի Բերլին. այս ուզեւորութեան քաղաքական կարեւորութիւն կը արուի :

— Ի Գաղղիա՝ Մ'ելինի Պաշտօնարանն կը յաղթանակէ ընդգէմ արմատականաց, Մոնմարտի ս . Սրտի տաճարին խնդրոյն մէջ :

— Սպանիական հեռագիրներու համեմատ, Կուպայի մէջ զինուց բախտն կամ յաջողութիւնն միշտ ի նպաստ Սպանիոյ է եւ հակառակ պաստամբաց :

— Մուրավիլի կոմնն կ'անուանուի « արտաքին գրծոց պաշտօնեայ », փոխանուկ իշխան Լորանովի :

Գ Ե Բ Բ Ա Ն Ա Ր . — Վենետիկոյ մէջ բժշկական համաժողով մի կը գումարուի Հնդկաստանի ժանուարին առջեւը առնլու հնարներ մտածելու համար, որպէս զի Եւրոպա շանցնի համաճարակ ախտն :

— Ուուլինի երեսփոխանաց ժողովը կը լուծէ, մարտի 3 ին օրը կը սահմանէ նոր ընարութեանց համախմբութիւնը :

— Կրետէի մէջ մեծ պայմանացիկ առմբն կը ճայթի . կղզայն քրիստոնեայ ժողովուրդն

ապստամբելով կ'ուզէ Յունաստանի պետութեան հետան հետան միանալ : Արքայորդի իշխանն գէրորդ՝ նաւաստրմղով կրեստացոց օգծութեան կ'երթայ : — Մ'եծ պետութիւնը բողոքելով այս բանիս դէմ՝ կը զրաւեն կղզին :

— Սպանիական կառավարութիւնն կուպայի վարչական մեծ ազատութիւն կու տայ, եւ միանամայն Սպանիոյ տալիք հարկերը կը կանոնաւորէ, սակայն միշտ Սպանիայէ կախումն ունենալով :

— Միացեալ նահանգաց նախագահ կ'ընտրուի Մարդ-Քինդէյ :

ՄԱՐՏ. — Ամենուն աշբը արեւելք դարձեր է . իտալիոյ մէջ հելլենասիրաց խմբեր կը կազմուին . կամաւոր զինուոր ըլլալու կ'երթան խմբովին բազմաթիւ իտալացիք : — Քրիստոնեայ տէրութիւնը՝ քրիստոնեայ գերմանիոյ առաջնորդութեամբ՝ կը ամբակծեն ապստամբ քրիստոնէից ամրոցները եւ գիւղերը . Յետոյ կ'որոշուի, — զոր Յունաստանի եւ Տաճկաստանի եւս կը հաղորդին, — Սուլթանի բարձրագոյն իշխանութեան ներքեւ կրետէի մէջ ինցնուրոյն վարչութիւն մը հաստատել : Յունաստանի եւս պատսիրեցին իւր պատերազմական նաւերը կրեաէի ծովէն հեռացնել, ինչպէս նաեւ կղզոյն միջն հանել իւր զօրքերը, սպաննալով հակառակ պարաբային մէջ սաստիկ միջնուներ ձեռք առնու :

— Աւատրիական երեսփոխանաց ընտրութիւնը՝ պահպանողական եւ հակարեւական կուսակցութեանց նպաստաւորը եղան :

— Իտալիոյ մէջ քաղաքական ընտրութիւնը կատարուեցան . . . ընկերութարականը յաջողութիւն կը գտնեն : — Ռաս-Ալուա կը մեւնի այս վեցերորդ անգամ, յուսանք թէ այլ եւս չի ողջնար :

— Կուպացիք Գոմեկի առաջնորդութեամբ ապստամբութեան շարժումն կը շարունակին, վասն զի Սպանիոյ Ռաս-Ալուան՝ Մանչէոն եւս՝ կը մեւնի այս շրբորդ կամ հինգերորդ անգամ :

ԱՊՐԻԼ. — Գաղղիոյ մէջ գարձեալ սաւ-

կաւ մի կը յուզուի Փանտոմայի ինպիրն . ձերբակալութիւն Արտոննի :

— Արեւելքի մէջ պատերազմն սկսած է . . . կանոնաւորապէս, թէպէս եւ վեց տէրութիւնը միացած ջանացին անոր ասչեւն առնուց, Յունաստան կը մերժէ կրետէի ինքնուրոյն վարչութեան առաջարկը . Վեց մեծ պետութիւնը կը պաշարեն կղզին, յուսալով որ վասար զնապահուին ձեռաց տակ եղած յոյն խումբերն եւ ապստամբը տեղի պիտի տան . բայց անոնց մարկ չեն ըներ՝ կը յամարին : Արտուրիի եւ Մալասկայի ամրոցն յարձակումներն եւ կրիներն կը պատահնին . Երկու կողմանէ եւս արիւնելութիւնը կ'ըլլան :

Վերջը յօւնական բանակի սպայից առաջնորդութեամբ մի քանի յօյն ապստամբ խըմբեր, Թեսաղիան Մակեդոնիայէն բաժնող սահմանազումը կ'անցնին, եւ աւրիշ արեւելքան կողմէ մը յեպիրոս կը մտնեն : Այս գետին վրայ Տաճկաստան, որ Ելատոնայի մէջ արգէն զօրաւոր բանակ մ'ունէր, Յունաստանի գէմ պատերազմ կը հրատարակէ : Էսահէմ փաշ, տաճկալան բանակի սպարապեան, Թեսաղիոյ մէջ կը մտնէ, եւ ուղղուի կ'երթայ Տիռնալիյոյ եւ Լարիսայի վրայ : Մի քանի ընդհարունոնց կ'ըլլան, յօրս յօնաց տկարութիւնն եւ տաճկաց զօրութիւնն եւ լաւ կազմակերպութիւնն յայտնի կ'ըլլայ :

— Գուլիկէմոն Բ Գերմանիոյ կայօրն, նախ քան Փրանչիսկոս Յօսիսէֆ կայսեր այցելութեան երթալն առ Զարն, վիճնակաց, անուշառ իւր կայսերակցին միաբը յառաջացոյն պատրաստելու համար, որպէս զի Եւրոպական խաղաղութիւնն՝ որոն մեծ պատպանն կը կոչ ինք զինքը՝ չի դրուվելու համար :

— Այս այցելութեամբ կ'ուզուի հիւսիսային երեց կայսերութեանց դաշնակցութիւնը մերանորգել, որ անցելոյն մէջ՝ ոչ շատ տարի յառաջ, կը տիրէր Եւրոպից մէջ, որով կը վերցուին յիշեալ երեք պետութեանց մէջ պատերազմի կամ հակառակութեան նպյն իսկ հեռաւոր շարժառիթը :

— Այս ամսոյս ԶԶին՝ Պետրոս Ալչիա-

րիտոյ՝ Հումբերտոյ թագաւորը սպաննել կը փորձէ Հռովմաց մօս եղած դաշտերուն մէջ, որ Հիարշափ հանդէս կը կատարուէր :

ՄԱՅԻՍ. — Խաալական երեսփոխանաց ժողովն կը հաստատէ ծրագիրը այս օրինաց, որով բանակին ամրող տարեկան ծախուց համար կը տահմանուի Ֆեք միլիոնի դումար մը :

— Աղետալի արկած մի կը պատահի ի Պարիս բարերարավթեան նախատական ճզմած տօնավաճառի մի բացման օրը՝ նշանաւոր մեծ Բազարին մէջ, որ աղքատաց համար զրեթէ երկա միլիան փրանկաց շահ այտաք բերէր : Կրակն փայտաշէն տեղէն կը սկի, եւ քանի մի բռպէի մէջ ամէն տեղ կը տարածուի բոցն եւ սարսափելի ջարդ մը Կ'ընէ : Երկու հաղաք հոգի ածովս դպրան, եւ երեք հարդիք կէս այրած մասցին; որոնց զրեթէ բարոն ալ Գաղղիոյ ամէնէն աւելի ազնուական ընսանեաց կը պատկանէին. (տես Բաղմակո 4897 էջ 346) :

— Արեւելեան պատերազմն կը շարժենաւ կամ միշտ՝ Յունաստանի համար ձախորդ եւ ազետալի, իրուն բանակը ամէն տեղ յաղթուեցա հորափոր, իսկ ծավալցին զգաւթիւնն որուն վրայ այնքան վսահանցեր ե՞ր ամենեւին օգուտ մը շըրսաւ :

— Իւր շքեղութեամբ անմուսանալի հանդէս մը կը ի կատարուի ի Հասկմ Վասիկանու մայր եկեղեցւոյն մէջ Համբարձման օրը, յորում Փուրիքը եւ Զաքարիա երանելեաց որբացուցման հանդէսն տեղի ունեցաւ : Աշխարհիս ամէն կոսմէ զիմող հաղարաւոր տարականց շքեղ հանդիսին ներկայ Կ'ըլլան :

— Հանդրայի մէջ Վլիկառիի թագաւորյն գահակարութեան վաթնամերորդ տարւոյ յարեւինին մեծամեծ հանդէսը կը սկսին :

— Մաք-Քինլի, Միահցեալ նահնանգաց նախագահն, կ'առաջարկէ ծերակուտին Ե հազար դղարի գումար մը յատիացնել կորպայի մէջ զտնուած ամերիկացի քաղաքացւոց օգնելու համար, որը ազստամբութեանց պատճառած աւերմանց համար սովէն կը տանջուէին : Ի Մատրիտ չեն հաւանիր այս բանիս, եւ Ամերիկոյ ներկայացւոցի պաշտօնէն կը յայտ-

նեն իրենց դանդատը . յորմէ Սպանիոյ Եւ Ամերիկոյ մէջ հակառակութիւն մի կը ծագի, որ բարերադարար շուտով կը մարի :

— Ամսոյս վերջը տաճկաց եւ յոնաց մէջ զինազարում Կ'ըլլայ : Խաղաղութեան դաշինք կը հաստատուին ու թ. Դուռն կը զնէ իրեն պայմանները ու Յունաստան առ մեծ պետութիւնն կը զիմէ, որոնք միջնորդ Կ'ըլլան իրեն եւ Սուլթանի կառավարութեան մէջ :

ՅՈՒՆԻՑ. — Անյաջող փորձ սպաննութեան Գաղղիոյ Հասարակապետութեան նախագահին ի Լոնչեառը . կը ծանուցուի նախագահին ճանապարհորդութիւնն ի յիտուատաւուն :

— Տաճկաց բանակն կը յարձակի եւ կը տիրէ թեսաղոյ :

— Համազային ժողով լրացրապետաց ի Ստակում:

ՅՈՒՆԻՑ. — Խաալական կառավարութիւնն կը ծանուցանէ երեսփոխանաց ժողովյան թէ յետ պիտի քաշուին Ափրիկէի մէջ եւ Անգղիացոց պիտի չնորհնեն զկասալու :

— Տաճեկը կ'որոշեն յանաց հետ իսպաղութիւն ընել :

— Խաալիոյ թագաւորական ընաանեաց ի Համբուրգ աղեւորութիւնը կը ծանուցուի :

— Անդրէս չուետացին կը մեկնի Սպիցբերգէն օգապարիկով ի գիտ հիմիսային բեմեւին :

ՕԳՈՍՏՈ. — Ջիկարոյի ծանօթ թղթակամբեանց պատճառաւ կը մենամարտին Օուլէանի իշխանն եւ Տուրինի կոմսն . զազգիացի իշխանին թեթեւ կերպալ վիրաւուելուն պատճառաւ բալանդակ իտալիոյ մէջ ցոյցեր կը լինին :

— Կը մեռնի կոստո, Խաալիոյ արդարութեան նախարարն :

— Միկայէլ Անգղիլիլլոյ կը սպաննէ ատրանակով նշանաւոր կանագաս կասահիլացին՝ Սպանիոյ պաշտօնարանին նախագահը :

— Զարն կ'ընդունի նախ գուցիկմաս կայսեր այցելութիւնը, յետոյ (աւելի շքեղ

Հանգիսի)՝ զաղղիսկան՝ Հասարակապետութեան Նախագահին, ի պատի որուն եւ Պետրովը մէջ ամենաշքեզ հանդէսը կը կատարուին։ Էնդանառութեան բաժաներու միջոցուու ինքնակալին եւ Գաղղիոյ Հասարակապետութեան Նախագահին խօսկցութեանց մէջ Երգակակցութիւն բառն հնչուեցաւ։

ՍԵԿՏԵՄԲԵՐ. — Սաղցիոյ թագուրութունը Հոմբուրգ կ'երթան, որ գերմանիոյ եւ որիշ արքայազուն ընտանեցմէ կ'ընդունուին։

— Կը հաստատուի յոյն՝ աաճկական խաղաղութիւնն, բայց թեսաղիոյ մէջ փոթորկալից ամկեր կը թանձրանան։ մըրին հանգարատած կ'երեւի՝ բայց ոչ անցած բոլովին։

— Սպանիոյ եւ Ամերիկոյ մէջ հակառակութիւնն կը յուզուի կորպայի պատճառու։ Աւարիա կը յայտարարէ թէ պիտի օգնէ Ապանիոյ։

ՀՈԿՏԵՄԲԵՐ. — Շարժուն հարստութեանց վրայ գրուած առորդերու առաւելութիւնն, եւ յեաին աստիճանի աղքատութիւնն բոլոր խոալիոյ մէջ ապաստիքական շարժումներ յառաջ բերին։ Հովիմայ մէջ արքունի բանակն փուժով կը խաղաղէ յուզուած ամրօնի։

— Յունաստանի մէջ նախարարութիւնը կը փոխուի, Դելիանինի կը փոխանակէ Զայմիս և ինչպէս նաեւ Ապանիոյ մէջ, ուր Սպասուս նախարարապետ կ'ըլլայ։

— Այցելաթիւն Գործովովսկիի ի Մոնցա։

— Աստրիխ Խորհրդարանի մէջ կը սկսին երեւի ազմկայոյ տեսարանը շահագիտական նպատակներով։

— Ռուբինի շըլարերականներ կ'ադարէ առ զաւուապետա ընդում կաթողիկեաց։ աստի յուզունը եւ հակառակութիւնը կը ծագին վերջնոց մէջ։

ՀՈՅԵՄԲԵՐ. — Ռուբինի Ցուրին կ'երթայ նառակասելու՝ ազատամիտ կողման ուժերը կեղունացնելու կամ զօրացնելու համար։ Մանարդեւան հով մը կը դէւ, որ նախարական դրույ կը դարձնէ դէպ ի բրեշիս և

— Մարտինի բանաստեղծն Երիխորէայի կառավար կ'ընտրուի, 125 հազար բանալ լիրայ տարեկան թոշակով։ այսուհետեւ կարելի չէ ըսել՝ թէ «բանաստեղծը անօժութեանէ կը մեռնին»։

— Աւարիոյ երեսփախանք՝ իրենց յիշատակելի նիստերուն մէջ՝ կը խօսին եւ կը գործեն և բանցի եւ աբացի հարուածներով։

— Ռուսիոյ աշքը կը դառնայ դէպ ի Զին եւ Ճապոն։ բայց ոչինչ նուազ հրապուրի է իրեն նաեւ Հնդկաստան։

ՀՈԿՏԵՄԲԵՐ. — Աւարիոյ մէջ երեսփախանական յեղափախութիւնն ի հրապարակ կ'իջնէ։ Պրապայի մէջ ազմկալից գեւզեր կը պատահին, պաշարման վիճակի մէջ է քաղաքն։ Խորհրդարանի նիստերն կը յետաձգուին։ Բավենի կուսին պաշտօնարանն կը զլորի։ Գաւուչ նոր պաշտօնարան մը կը կազմէ։

— Ի Գաղղիս Դրէյփուսի խնդիրն կը յուզէ զամէնքը։

— Խոալիոյ մէջ նոյնպէս նախարարութեան անզամը կը փսխուին։ Ռուբինի հաստատուն կը մնայ իւր նախագահութեան մէջ, ինչպէս նաեւ Վիսկնդի վենուսդա կը մնայ արտաքին գրուց նախարար։ Մանարդելլի արդարութեան նախարար կ'ըլլայ ։

— Անդղեացիք կը գրաւեն զեկասաւա, խոալացիք կը քաշուին։

— Զինացւոց անգութ մայրագութիւնն որով սպաննեցին մի քանի գերմանացի քարոզիւններ՝ զրուեց զգերմանիս, որ զրահաւոր նաւեր ուղարկեց զրաւելու կիսառ-Զատ նաւահանգիսար։ Միւս երոպայի աէրութիւնը կը բանան աշքերնին, եւ Զինաստանը բաժնելու լուրն կը տարածուի։

